

ՀՐԱՎԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԵՐԿՐԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ «POSTDOC» ԾՐԱԳԻՐ 2023» ՄՐՑՈՒՅԹԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մրցույթը

- 1.1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc» ծրագիր 2023» հայտերի (այսուհետ՝ **Հայտ**) ընտրության մրցույթն (այսուհետ՝ **Մրցույթ**) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի փետրվարի 09-ի N 218-Ա/2 հրամանի:
- 1.2. **Մրցույթը** կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ՝ **Կոմիտե**)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով:
- 1.3. **Մրցույթն** ուղղված է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող կազմակերպությունում (այսուհետ՝ **Կազմակերպություն**) արտերկրի գիտնականների ներգրավվածությամբ նոր, մրցունակ և հեռանկարային գիտական ուղղությունների ստեղծմանը:
- 1.4. **Մրցույթն** իրականացվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառներով (Հավելված N 2.1):
- 1.5. Ներկայացվող գիտական նախագիծը (այսուհետ՝ **Նախագիծ** (Հավելված N 2.4)) պետք է լինի հավակնոտ, խոստումնալից և իրագործելի:

1.6. **Մրցույթի** հրավերի փաթեթը սահմանում է դիմելու կարգը, չափանիշները, **Հայտերի** գնահատման փուլերը և շահառու **Նախագծերի** ֆինանսավորումն ու հաշվետվողականությունը:

2. Նպատակը

2.1. **Մրցույթի** նպատակներն են.

- խթանել գիտության ոլորտում միջազգային համագործակցությունը,
- բարձրացնել **Կազմակերպության** ներուժը,
- ներգրավել արտերկրի գիտնականների,
- ներգրավել Սփյուռքի գիտական ներուժը,
- բարելավել գիտական միջավայրը,
- հիմք դնել նոր, մրցունակ և հեռանկարային գիտական ուղղությունների ստեղծմանը:

3. Հայտատուն

3.1. **Հայտատու** կարող է լինել այն անձը, ով՝

- ծնվել է 1983 թվականի հունվարի 1-ից հետո,
- **Նախագծի** իրականացման ողջ ընթացքում բնակվում է Հայաստանի Հանրապետությունում,
- գիտական աստիճանը ստացել է 2010 թվականի հունվարի 1-ից հետո,
- սույն **Մրցույթի** հրավերի հրապարակմանը նախորդող 4 տարիների ընթացքում գումարային 12 ամիս և ավելի Հայաստանի Հանրապետությունում չի ուսումնառել կամ աշխատել:

3.2. 3.1. կետում նշված տարիքային շեմը կարող է ավելանալ՝

- Զինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ 2 տարով,
- երեխայի խնամքի արձակուրդում գտնված լինելու դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար 1 տարով:

3.3. **Հայտատուն** չի կարող սույն **Մրցույթին** ներկայացնել մեկից ավելի **Հայտ**:

3.4. **Հայտատուն**, բացի սույն **Մրցույթից**, կարող է ընդգրկվել **Կոմիտեի** կողմից հայտարարված ևս մեկ մրցույթում, ինչպես նաև «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր» մրցույթներում, որպես գիտական ղեկավար:

3.5. **Հայտատուն** վերջին 5 տարիների համար պետք է ներկայացնի՝

Հավելված N 2.1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության «1-5» բնագավառների մասնագիտություններով.

- 4 գիտական հրապարակում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», «Arts&Humanities Citation Index (AHCI)»), **կամ** գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչությունների հրապարակած գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում, **կամ** «Scimago Journal & Country Ranking» պորտալի առնվազն Q4 քառորդ, իսկ գիտաժողովի նյութերի դեպքում՝ առնվազն Q2 քառորդին համարժեք SJR ինդեքս (SCImago Journal Rank Indicator) ունեցող պարբերականներում (այսուհետ՝ **ՄԳՇ**),
- **կամ** 1՝ առնվազն 5 տպագրական մամուլ ծավալ ունեցող մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական աշխատություն՝ հրատարակված Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում (այսուհետ՝ **Մենագրություն**):

Հավելված N 2.1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության «6» բնագավառի մասնագիտություններով՝

- 2 հրապարակում **ՄԳՇ**-ում,
- կամ 1 **Մենագրություն**,

Մեկ Մենագրությունը համարժեք է 4 ՄԳՇ-ում հրապարակման:

- 3.6. Բեալի ցանկերում (Beall's list, <https://beallslist.net/>) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատություն ներկայացնելու դեպքում **Հայտը** փորձաքննության ենթարկելու հարցը կքննարկվի Հայտերի գնահատման նպատակով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդում (այսուհետ՝ **Խորհուրդ**):

4. Կազմակերպությանը ներկայացվող պահանջները

- 4.1. **Կազմակերպությունը** պետք է լինի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող:
- 4.2. **Կազմակերպությունը** պետք է աջակցի **Նախագծի** իրականացմանը:

- 4.3. **Կազմակերպությունը Հայտատուին** է տրամադրում **Կազմակերպության** (բուհի ֆակուլտետի) գիտական (գիտատեխնիկական) խորհրդի եզրակացությունը (Board Conclusion), որտեղ նշվում է **Նախագծի** համապատասխանությունը, կարևորությունը և արդիականությունը **Կազմակերպության** գիտական ուղղություններին:
- 4.4. **Կազմակերպության** ղեկավարը **Հայտատուին** է տրամադրում տեղեկանք, որ ծանոթ է **Մրցույթի** հրավերի պայմաններին և **Նախագծի** ֆինանսավորման պարագայում պատրաստ է ապահովել հրավերի «4.5.» ենթակետում նշված պայմանը:
- 4.5. **Կազմակերպությունը Նախագծի** իրականացման մինչև 6 ամիս լրանալը, առնվազն **Նախագծի** կատարման ողջ ընթացքի համար, **Հայտատուին** ներառում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագրում:
- 4.6. **Նախագծի** իրականացման ընթացքում **Հայտատուին** կազմակերպչական հարցերում աջակցություն ցուցաբերելու համար **Կազմակերպության** ղեկավարը կարող է նշանակել պատասխանատու անձ:
- 4.7. **Կազմակերպությունը** հասանելիություն է ապահովում առկա ենթակառուցվածքներին և սարքավորումներին:
- 4.8. Ֆինանսական նախահաշվի (այսուհետ՝ **Նախահաշիվ**), «Այլ ծախսեր» հոդվածի «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով նախատեսված ֆինանսական միջոցներով **Կազմակերպության** ղեկավարն ապահովում է **Նախագծի** կատարման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելուն ուղղված ծախսերը:
- 4.9. **Կազմակերպության, Կոմիտեի** և ֆինանսավորման երաշխավորված **Նախագծի Հայտատուի** միջև կնքվում է Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc» ծրագիր 2023» մրցույթի համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին եռակողմ պայմանագիր (այսուհետ՝ **Պայմանագիր**):
- 4.10. **Նախագծի** իրականացման համար ձեռքբերված սարքերը, նյութերը և ծառայությունները ներառվում են **Կազմակերպության** հաշվեկշռում՝ հետագայում կանոնադրական նպատակներով օգտագործելու (գիտական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման) համար:

5. Ժամկետները

- 5.1. **Նախագծի** իրականացման տևողությունը 12 կամ 24 ամիս է:
- 5.2. **Մրցույթին** դիմելու վերջնաժամկետն է 2023 թվականի ապրիլի 21-ը: (**Հայտերի** ուղարկման հնարավորությունը կարգելափակվի Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):
- 5.3. **Պայմանագրերը** կկնքվեն **Մրցույթի** արդյունքները հայտնի դառնալուց հետո 10-օրյա ժամկետում:
- 5.4. **Նախագծերը** սկսվում և իրականացվում են **Պայմանագրում** նշված ժամկետներում:

6. Ակնկալվող արդյունքները

- 6.1. **Նախագծի** կատարման ժամկետը լրանալուց հետո **Հայտատուն** պետք է ներկայացնի **Մրցույթի** հրավերի «6.3.» ենթակետով սահմանված նշումով՝
 - առնվազն 2 գիտական հրապարակում առնվազն Q2 քառորդին համարժեք SJR ինդեքս (SCImago Journal Rank Indicator) ունեցող պարբերականներում:
- 6.2. Որպես **Նախագծի** արդյունք ներկայացված գիտական հրապարակումներում **Հայտատուի** աշխատավայր (affiliation) պետք է նշվի **Կազմակերպությունը**:
- 6.3. **Նախագծի** շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները հրապարակելիս անհրաժեշտ է նշել **Կոմիտեի** կողմից ստացած աջակցության մասին.
 - *This work was supported by the Science Committee of RA (Research project № _____).***Համապատասխան նշման բացակայության դեպքում հրապարակումը չի համարվելու Նախագծի արդյունք, հետևաբար՝ չի ընդունվելու հաշվետվության մեջ:**
- 6.4. **Նախագծի** իրականացման ընթացքում **Հայտատուն** պետք է ապահովի **Նախագծի** և/կամ գիտության տվյալ բնագավառի վերաբերյալ գիտահանրամատչելի նյութերի ստեղծում և հանրայնացում (հարցազրույցներ, հրապարակումներ գիտահանրամատչելի ամսագրերում, տեսանյութերի ստեղծում և տարածում, լայն լսարանի համար քննարկումների կազմակերպում և այլն), որոնք հաշվի կառնվեն **Խորհրդի** կողմից ամփոփիչ հաշվետվությունն ընդունելու մասին եզրակացություն տալիս:
- 6.5. «6.1.» ենթակետում նշված պայմանը չկատարելը/կատարելը կանդրադառնա հետագայում **Կոմիտեի** հայտարարած մրցույթներին **Հայտատուի** կողմից ներկայացվող հայտի փորձագիտական գնահատականի վրա՝ դրանից հանելով/գումարելով տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի 5 տոկոսի չափով միավոր: Հետագա մրցույթներին **Հայտատուի** կողմից ներկայացված հայտի փորձագիտական

գնահատականի նվազեցումը կչեղարկվի **Նախագծի** ավարտից հետո «6.1.» ենթակետում նշված պայմանը կատարելու դեպքում:

II. ՀԱՅՏԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

7. Հայտ ներկայացնելը

7.1. **Հայտը** լրացնում և ներկայացնում է **Հայտատուն՝** postdoc-armenia-2023.scs.am առցանց համակարգի միջոցով՝ մինչև 2023 թվականի ապրիլի 21-ը ներառյալ (**Հայտի** ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

7.2. **Կոմիտե** ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

- Հայտատուի** դիմումը (Հավելված N 2.2),
- Հայտատուի** մասնագիտական ինքնակենսագրությունը (CV),
- Նախահաշիվը,**
- Կազմակերպության** կամ ֆակուլտետի գիտական (գիտատեխնիկական) խորհրդի եզրակացությունը, որը պետք է պարունակի տեղեկատվություն **Կազմակերպության** գիտական ուղղություններին **Նախագծի** համապատասխանության, կարևորության, արդիականության և իրագործելիության վերաբերյալ:
- Կազմակերպության** ղեկավարի գրությունը,

7.3. Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել այլ փաստաթղթեր:

7.4. **Կազմակերպության** կողմից ներկայացվող բոլոր **Հայտերին** վերաբերող փաստաթղթերը մեկ ընդհանուր փաթեթով **Կոմիտե** է ներկայացնում **Կազմակերպության** լիազորված անձը (գիտական քարտուղար կամ այլ)՝ առձեռն մինչև 2023 թվականի ապրիլի 28-ը ներառյալ աշխատանքային օրերին ժամը 09:00-13:00 և 14:00-18:00 (Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 706 սենյակ):

7.5. **Մրցույթի** վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն և խորհրդատվություն կարելի է ստանալ **Կոմիտեի** գիտական գործունեության կազմակերպման վարչությունից, հեռախոս՝ (010) 210140 (ներքին 108), էլեկտրոնային փոստ՝ scexpert@scs.am:

Ուշադրություն. **Կոմիտեն քննարկման է ընդունում միայն առցանց համակարգի կողմից ձևավորված Հայտերը: Հայտերը, որոնք չեն ուղարկվել վերը նշված կարգի և ժամկետների համաձայն, քննարկման ենթակա չեն:**

- 8. Նախահաշվի կազմությունը** Նախահաշիվը կազմված է «Աշխատանքի վարձատրություն» և «Այլ ծախսեր» հոդվածներից: «Այլ ծախսեր» հոդվածը բաղկացած է «Սարքեր, նյութեր և ծառայություններ», «Գործուղումներ» և «Վերադիր ծախսեր» ենթահոդվածներից:
- 8.2. **Նախահաշվի** «Աշխատանքի վարձատրություն» հոդվածում **Հայտատուի** աշխատանքի վարձատրության (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները) առավելագույն չափը նախատեսել ամսական մինչև 400.0 հազար դրամը:
- 8.3. Եթե աշխատանքի վարձատրության համար նախատեսված գումարը պակաս է վերոնշյալ ծավալից, ապա տարբերությունը կարելի է օգտագործել **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածում:
- 8.4. Ընտանիքի անդամ(ներ)ի հետ Հայաստանի Հանրապետություն տեղափոխվելու դեպքում՝ **Հայտատուի** աշխատանքի վարձատրության չափը, հետևաբար՝ նաև **Նախագծի** ֆինանսավորման աշխատանքի վարձատրության առավելագույն չափը 12-ամսյա կտրվածքով կարող է ավելանալ 1800.0 հազար դրամի չափով:
- 8.5. «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ», «Գործուղումներ» և «Վերադիր ծախսեր» ենթահոդվածներով գումարային 12-ամսվա կտրվածքով կարելի է նախատեսել մինչև 1500.0 հազար դրամ: Այս գումարը կարող է ավելանալ «8.3.» կետով սահմանված տարբերության չափով:
- 8.6. **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» ենթահոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների, հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռքբերման և/կամ ծառայությունների ծախսերը: **Հայտատուն** ծառայությունների մատուցման պայմանագրեր կարող է կնքել միայն իրավաբանական անձանց հետ՝ համաձայնեցնելով **Կոմիտեի** հետ:
- 8.7. **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Գործուղումներ» ենթահոդվածով նախատեսվող գումարը կարող է օգտագործվել **Նախագծի** ընթացքի ու արդյունքների ներկայացման նպատակով միջազգային գիտաժողովներին մասնակցության համար:
- 8.8. **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով (12 ամսվա համար) կարող է հայցվել մինչև 100.0 հազար դրամ:
- 8.9. Գործուղումների օրապահիկը և գիշերավարձը հաշվարկելիս անհրաժեշտ է առաջնորդվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ:

- 8.10. **Նախահաշվի** բոլոր ենթահոդվածների ծախսերը պետք է հիմնավորել **Նախահաշվի** մեկնաբանության մեջ:
- 8.11. **Նախահաշվի** հիմնավորվածությունը և բաշխումը կարող են լրամշակվել **Խորհրդի** առաջարկությամբ և **Հայտատուի** համաձայնությամբ:

III. ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

9. Հայտերի համապատասխանությունը **Մրցույթի** պայմաններին.

- 9.1. **Կոմիտեն** ուսումնասիրում է **Մրցույթին** ներկայացված **Հայտերի** համապատասխանությունը **Մրցույթի** պայմաններին,
- 9.2. Բեալի ցանկերում (Beall's list, <https://beallslit.net/>) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատությունների ներկայացվածությունը **Հայտում**,
- 9.3. Ստուգման արդյունքները տրամադրում է **Հայտերի** գնահատման համար ստեղծված **Խորհրդին**:
- 9.4. **Խորհրդի** կողմից քննարկվում է **Հայտը** փորձաքննության ենթարկելու հարցը:
- 9.5. **Խորհուրդը** հաստատում է փորձաքննության ենթակա **Հայտերի** ցանկը:

10. Փորձաքննությունը

- 10.1. **Խորհուրդը Կոմիտեի** հետ համատեղ մշակում և հաստատում է **Հայտերի** փորձաքննության առաջին և երկրորդ փուլերի (գիտական փորձաքննության և հարցազրույցի) գնահատման թերթիկները և վարման կարգը:

11. Փորձաքննության առաջին փուլը

- 11.1. Փորձաքննության առաջին փուլում **Խորհուրդը**, հաշվի առնելով **Նախագծի** ընդարձակ ամփոփագիրը (Հավելված N 2.3), **Հայտատուի** գիտական հետազոծը (track record), մասնագիտական ինքնակենսագրությունը (CV), **Կազմակերպության** համապատասխանությունը **Նախագծի** նպատակներին, համաձայնության սկզբունքով ձևավորում է առաջին փուլը հաղթահարած **Հայտերի** ցանկը, որոնք անցնում են փորձաքննության հաջորդ փուլ:
- 11.2. Փորձաքննության առաջին փուլը չհաղթահարած **Հայտերի Հայտատուները** տեղեկացվում են այդ մասին:

12. Փորձաքննության երկրորդ փուլը

- 12.1. Փորձաքննության առաջին փուլը հաղթահարած **Հայտերը** ենթարկվում են գիտական փորձաքննության, իսկ **Հայտատուների** հետ անցկացվում են հարցազրույցներ: Այս փուլում գնահատվում են խնդրի արդի վիճակը, նորույթը, հեռանկարը, **Կազմակերպությունում** իրականացման նախադրյալները, համապատասխանությունը ոլորտի զարգացման միտումներին, աշխատանքի ծավալի և իրականացման ժամկետների հիմնավորվածությունը, համագործակցության նպատակահարմարությունը, **Հայտատուի** որակավորումը և մասնագիտական համապատասխանությունը **Նախագծի** նպատակներին, **Նախահաշվի** հիմնավորվածությունը, ինչպես նաև **Մրցույթի** առանձնահատկություններից բխող այլ հարցեր:
- 12.2. **Հայտը** գիտական փորձաքննության է ենթարկվում առնվազն երկու փորձագետի կողմից: Որպես փորձագետ կարող է հանդես գալ նաև **Խորհրդի** անդամը:
- 12.3. Յուրաքանչյուր **Հայտի** համար փորձագետը լրացնում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկը:
- 12.4. Երկու փորձագետների գնահատականները գիտական փորձաքննության առավելագույն գնահատականի 30 և ավելի տոկոսով տարբերվելու դեպքում **Հայտը** ենթարկվում է փորձաքննության երրորդ փորձագետի կողմից: Այդ դեպքում գիտական փորձաքննության գնահատականը երեք փորձագետների՝ երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է: Երեք փորձագետների գնահատականների հավասար տարբերությունների դեպքում գիտական փորձաքննության գնահատականը երկու առավելագույն գնահատականների միջին թվաբանականն է:
- 12.5. Գիտական փորձաքննության ժամանակ փորձագետի առավելագույն գնահատականը կազմում է **Հայտի** առավելագույն գնահատականի 50 տոկոսը:
- 12.6. Հարցազրույցի ժամանակ **Խորհրդի** յուրաքանչյուր անդամ լրացնում է հարցազրույցի գնահատման թերթիկը:
- 12.7. Հարցազրույցի առավելագույն գնահատականը կազմում է **Հայտի** առավելագույն գնահատականի 50 տոկոսը:
- 12.8. Փորձաքննության երկրորդ փուլի գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի և հարցազրույցի գնահատականների միջին թվաբանականի գումարն է:

12.9. **Կոմիտեի** և փորձագետների կողմից **Հայտի** բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

13. Գնահատման արդյունքները

13.1. **Կոմիտեն** փորձաքննության երկրորդ փուլի արդյունքներով ձևավորում է **Հայտերի** վարկանիշային ցանկ՝ գնահատականների նվազման կարգով և ներկայացնում **Խորհրդին**՝ քննարկման:

13.2. **Խորհուրդը Կոմիտեի** նախագահին է ներկայացնում **Հայտերի** գնահատականների վարկանիշային ցանկը:

13.3. **Կոմիտեն**, ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման հատկացումների չափից, որոշում է գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի շեմային գնահատականը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին է ներկայացնում ֆինանսավորման երաշխավորված **Հայտերի** ցանկը և նախատեսված ֆինանսավորման չափը հաստատելու մասին հրամանի նախագիծ:

13.4. **Մրցույթի** արդյունքում ֆինանսավորման երաշխավորված **Հայտերի** ցանկը տեղադրվում է **Կոմիտեի** պաշտոնական կայքում:

13.5. **Կոմիտեն Կազմակերպության** ղեկավարին տրամադրում է տվյալ **Կազմակերպության** շահառու **Հայտերի** ցանկը և յուրաքանչյուր **Հայտի Նախահաշիվը**:

13.6. **Կոմիտեն Հայտատուներին** տրամադրում է փորձաքննության արդյունքները և անցողիկ շեմային գնահատականը:

IV. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

14. Հայտի չդիտարկվելը

14.1. **Հայտը** չի դիտարկվում հետևյալ դեպքերում.

- չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,
- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ գիտական նախագծի հետ,

- չի բավարարում **Մրցույթի** հրավերի պայմաններին,
- միաժամանակ ներկայացված է **Կոմիտեի** կողմից անցկացվող այլ մրցույթների:

15. Այլ պայմաններ

- 15.1. Մտավոր սեփականության հեղինակային կամ արտոնագրային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող **Նախագիծ** և այնուհետև հաշվետվություն ներկայացնելու դեպքում **Հայտատուները** պետք է առաջնորդվի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դրույթներով:
- 15.2. **Նախագծի** իրականացման յուրաքանչյուր 12 ամիսը լրանալուց հետո, տասնօրյա ժամկետում **Կոմիտե** է ներկայացվում ընթացիկ (տարեկան) հաշվետվություն, որի հիման վրա **Խորհուրդը** տալիս է եզրակացություն:
- 15.3. **Նախագծի** իրականացման ընթացքում **Կոմիտեն** կարող է իրականացնել **Նախագծի** մշտադիտարկում և արդյունքները ներկայացնել **Խորհրդին**:
- 15.4. **Նախագծի** ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին եզրակացություն տալիս՝ **Խորհուրդը** պետք է հաշվի առնի նաև մշտադիտարկման արդյունքները:
- 15.5. Նախագծի ավարտից հետո **Հայտատուն** կարող է դիմել Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագրին:
- 15.6. **Կոմիտեն** կարող է ֆինանսավորման երաշխավորված **Նախագծերի** անոտացիան և հաշվետվությունը հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:
- 15.7. **Կոմիտեի, Կազմակերպության** և ֆինանսավորման երաշխավորված **Հայտի Հայտատուի** միջև կնքվում է **Պայմանագիր**:

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ**

<p>1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p> <p>1.1 Մաթեմատիկա</p> <p>1.2 Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ</p> <p>1.3 Ֆիզիկա և աստղագիտություն</p> <p>1.4 Քիմիա</p> <p>1.5 Երկրի մասին և դրան հարակից քննապահպանական գիտություններ</p> <p>1.6 Կենսաբանական գիտություններ</p> <p>2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ</p> <p>2.1 Քաղաքաշինություն և ճարտարապետություն</p> <p>2.2 Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ</p> <p>2.3 Մեխանիկա</p> <p>2.4 Մեքենագիտություն և մեքենաշինություն</p> <p>2.5 Քիմիական տեխնոլոգիաներ</p> <p>2.6 Նյութագիտություն</p> <p>2.7 Բժշկական սարքաշինություն</p> <p>2.8 Էկոլոգիա</p> <p>2.9 Կենսատեխնոլոգիա</p> <p>2.10 Նանոտեխնոլոգիա</p> <p>3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p> <p>3.1. Ընդհանուր բժշկություն</p> <p>3.2. Կլինիկական բժշկություն</p> <p>3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա</p>	<p>4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p> <p>4.1 Անասնաբուծություն, անասնաբուժություն</p> <p>4.2 Բուսաբուծություն</p> <p>4.3 Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն</p> <p>4.4 Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա</p> <p>5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p> <p>5.1 Հոգեբանություն</p> <p>5.2 Տնտեսագիտություն և գործարարություն</p> <p>5.3 Մանկավարժական գիտություններ</p> <p>5.4 Սոցիոլոգիա</p> <p>5.5 Իրավունք</p> <p>5.6 Քաղաքական գիտություններ</p> <p>5.7 Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն</p> <p>5.8 Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն</p> <p>6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p> <p>6.1 Պատմություն, հնագիտություն</p> <p>6.2 Լեզվագիտություն, գրականագիտություն</p> <p>6.3 Փիլիսոփայություն, էթիկա</p> <p>6.4 Աստվածաբանություն, կրոնագիտություն</p> <p>6.5 Արվեստագիտություն</p>
---	--

ՀՀ ԿԳՄՍՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ _____

(անուն հայրանուն)

ից

_____ (ազգանուն)

_____ (հասցե)

_____ (հեռախոս)

Դ Ի Մ ՈՒ Մ

Խնդրում եմ ընդունել Գիտական և գիտատեխնիկական գործունեության
պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Հայաստանի
Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների
«PostDoc» ծրագիր 2023» մրցույթին մասնակցության «_____» վերնագրով հայտը:

Դիմող՝ _____
(ստորագրություն)

(_____)
(անուն, ազգանուն)

«___» _____ 2023թ.

Նախագծի վերնագիրը

Ընդարձակ ամփոփագիրը

Ընդարձակ ամփոփագիրը գնահատվում է փորձաքննության առաջին փուլում, հարկավոր է ներկայացնել անգլերեն՝ մինչև 2 էջ:

Ընդարձակ ամփոփագիրը պետք է լինի **Նախագծի** հակիրճ տարբերակը՝ ներառելով հետազոտության կարևորությունը և նպատակահարմարությունը:

Ն ա խ ա գ ի ծ

Ներկայացնել անգլերեն, մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները
և գրականության ցանկը.

1. Համառոտ բնութագիրը (անտուացիա)

**2. Հետազոտական խնդրի վերաբերյալ գիտելիքների ներկա վիճակի մասին
վերլուծությունը**

3. Ծրագրի նպատակները և խնդիրները

4. Հետազոտական նախագիծը

5. Իրականացման միջոցները: Մեթոդները

6. Օրացուցային պլանը (ըստ եռամսյակների կամ Գանտի աղյուսակ)

7. Ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները (գիտական
հոդվածներ, գիտաժողովների նյութեր և այլն), նորարարական կարողության օգտագործում
(տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր
սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն), միջազգային
համագործակցային կապերի ամրապնդում, համագործակցության հեռանկարներ)

8. Օգտագործված գրականության ցանկը